լորդ կը համարիմ գրել, վասնզի լսած էք անշուշտ թէ ինչպէս պատուով ընդունուեցանք ի Վեհ. Կայսերէն, Կորչաքով իշխանէն և միւս նախարարներէն... Հոս ամենայն ինչ առ այժմ յաջող դիրքի մէջ է։ Աղօթենք Աստուծոյ, որ խաղաղութիւնը հաստատուի և գեսպանաժողովը գումարուի, այն ատեն կը յուսանք որ Աստուծոյ այցելութիւնը զմեզ միսիթարէ, շնորհելով հայրենեաց մերոց երջանկաւէտ ապագայ...»։

(*Շարայարելի*) Հ. Ե. ՏԱՅԵՑԻ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԻՒԹԵՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Փ. ՊՈԼՍՈՅ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԻՐՔԵՐԸ ԶԵՌԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ

Յանկս կազմած եմ 1917ին ընդհանուր պատերազմին ատեն երբ Պուլկարիոյ Փ. Պոլիս՝ այսինքն Ֆիլիպէ քաղաքը ապաստանած էի։

Թիւ 1. — (Եկեղեցական անօթ թիւ 85, 270 կրամ կամ 97 տրամ արծաթ) Աւետարանիս արծաթապատ կողքը ունի հետեւեալ արձանագրութիւնը։ «Յշտակ սուրբ աւետարանս Պետրոսի որդի տրացու օվնանէսի և կողակցին բրարիսնին և որդւոյն տրցու մարտիրոսին սուրբ Գէորգայ թվին ՌՄԻ (1771)ին Յուն.»։ Բաւական աշխատուած բայց կոշտ փորագրութեամբ երկու կափարիչներ են որոնք կէսսակէս կը պարունակեն վերեւ արտագրեալ յիշատակարանը։ Ա. կողքը ունի աստղեր, Ս. Յովսէփ Յիսուսը գըրկած. նոյն կողքին վրայ կան նաեւ Աստուած, սուրբ մը և արծիւ մը, Յովհանու Կարապետի գլխատուած մարմինը։ Իսկ Բ. կողքին վրայ չորս աւետարանիչները իրենց անուններով Յոհանէս, Մաթէոս, Մարկոս, Ղկաս, նաեւ հրեշտակներ, Յիսուս խաչեալ. իսկ սեւ խաչին վրայ կան ծանօթ Յ. Ն. Թ. Հ. գրերը, խաչին վերեւ կ'երեւի Աստուած։ Գրքին մէջ ուրիշ արձանագրութիւն չկայ։

Թիւ 2. — Նոր կտակարան տպ. Վենետիկ Անտոնի Պոսթօլի, 1766 մայիս 20, էջք 420. թաւշապատ կողք՝ որուն վրայ հետքերը կ'երեւան Յիսուսի խաչելութեան և յարութեան քանդակներու ինչպէս նաեւ հրեշտակներ և անընթեռնելի յիշատակութիւն։

Թիւ 3. — Աւետարան կաշեկազմ արծաթ թիթեղ զարդերով զարդարուած։ Ներքին Ա. կողքը ունի. «Յիշատակ սր. աւետարանս ունձեան հռիփսիմէ դուստրի զոր էտի վայելուն սր. Ստեփանոս եկեղեցւոյ տր. մեսրոպին 1803 յուլիս 22»։ Ս. Ստեփանոս Փ. Պոլսոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն աջակողմեան պահարանին կամ մատուռին տրուած անունն է։ Սոյն աւետարանին մէջ դարձեալ կայ. «Ի Ֆիլիպէ սր. Գէորգայ եկեղեցւոյն յիշատակ է այս սր. աւետարանս մանուկ աղայի փնսան պողոսին հանգուցեալ հորին բուխանուխցի մնսի. գէորգ ամիրային մնսի. խլատուրին և համայն ենչեցեղոց հոգին»։

Թիւ 4. — Խորհրդատետր տպ. Կ. Պոլիս ի Նոր-բակերտ տպարանի Գրիգոր դպրի Մարզուանցւոյ, թվին ՌՃԾԷ (1708)։ Գիրքս կը գտնուէր գէշ վիճակի մէջ։ Վերջի թերթին Բ. սիւնակին վերջը նօտրգիր գրուած է.

«Յիշատակ է խորհուրդատետրս երեւանցի բռնայ որդի տիրացու ալիքսանին այլ և օժեալ վիմս որ օժեցեաւ ի Կոստանդինուպոլիս պատրարք սր. Կարապետու վանից աւետիք վարդապետի ձեռօքն յիշատակ մանաստրու ժողովրդական թվին ՌՄԾԲ (1763)»։ — Իսկ վերջին ներքին կողքին վրայ... «Թվին 1210 (1761)ին յուլիսի օնին որ էս Սոֆիայի տր. մարտիրոս նորնձաս եկի մանազրիր ով եղբարք քահանայք խիստ պարտու կու մատչէք իս մեղաւորս յիշիք և յիշեալ լինիցիք առաջի աստուծոյ»։

Թիւ 5. — Կարգ թաղման կարգաւորաց Էջմիածին տպ. Գրիգորի Լուսաւորչի ՌՄԻԶ (1777) կաշեպատ տախտակ կազմով։ Ներքին կողք Ա էջ.

«Յիշատակ է սր. գիրգս ընծայեալ ի շնորհալի Սրբ. Արոռոյ Էջմիածնի գահակալին և ընդհանուր Սրգան. հայրապետի Տն. Տն. Ղուկասու ի վայելուչն չոսօրեցի տր. Մանուկ ընտիր քահանային որ ի Ֆիլիպէ ի ՌՄԻԶ (1777) թվին յամսեան յունիս Գ.»։

Թիւ 6. — Գրքոյկ կոչեցեալ երգարան ՌՄԻԱ (1772) – Պետրոս վրդ. Ղափանցւոյ ի տպ. Աս-